## 95. ԱՄԵՆՔՅԱ ԵՐԵՍՈՒՆ ԿԱՊԵԿ ԷԼ ՉԻ ԻՆԳՅՈՒՄ

Էրկու մոտե հնգըեր ըն ինում։ Տհանցա մինը շատ պարտկ անող ա ինում, ըրած պարտկն էլ ետ տամ չար։ Էն մինն էլ շատ բիդի իրան քաշող ա ինում, կապեկն էլլա պեց չար թողում։ Հունց ա պըտահում, վըեր էտ պարտկ սիրող հնգըերը տրանա մեհետ երեսուն կապեկ պարտկ ա յոր օնում։ Մին քանի տարե յա անց կենում, տա հնգըերին պարտկը տամ չի։ Հնգըերն էլ շատ քյինամ-լյավ-կյալյավ կարում չի իրան պարտկը ինքյ օնըե։ Կյամ ա քսան տարըեն կլխավն անց կենում, էլլա չի կարում ինքյ օնըե։ Տա հարիր մըննեթու ծախս ա անում, քյինամ տրա տոն, մին լյավ օտում խմում, վերջումն էլլա իրան երեսուն կապեկն օզում ա, հնգըերն ասում ա.— Խե յը՞ս ջափա քաշալ, ծախս ըրալ եկալ, տու քյինա ծըեր տոն, ես քու փողըտ կըպիրիմ։ Նորից ա մին տարե կլխավն անց կենում, պարտկ յոր օնողն էլլա փողը տանում չի տա։

Պարտկ տվողն էլ քյինամ ա տրա տան ըռաշին մին տոն շինում, ընդըեղ կենում, հանցու միշտ հնգըերը տըեսնա, մըետը պահե, տանե իրան պարտկը տա։ Տա տըեսնում ա, վըեր հնգըերըն իրան պարտկն օզում չի տա, կնգանն ասում ա.— Ես սուտըսոտ մըռնըլական ըմ, տու վըեղ սուտըսոտ ինձըրա լյաց կինիս, ամմըեն հինչ ընըեկյան եսը վըեր ինձ կըտանեքյ թաղեքյ, ինձնըհետ մին քանի օրվա ուտելի տես-տեն կըտինիս, հինգյխտիս ղաթավն էլ մին ծակ թողես, հանցու վըեր օթ հաղ անե, մին քանի օր տըեղ կենամ, ետնան տըեսնամ հի՞նչ ըմ անում։

Սուտըսոտ մըռնելյան եսը տրա կնեգյը սուտըսոտ լյաց ա ինում, վայ-վայ անում։ Ժողովուրթը վըեր լոխ հըվաքվում ըն,

Հնգըերն էլ ա կյա՛մ, դա՛ստին կլ՛ոխ ինգյո՛ւմ, վըեր տա մըեռալ չի, ըսկսում ա ինքյն էլ սուտըսուտ լա՛ց ը՛նիլը, ետնան մտկումն ասում՝ ես սրան մին հունց քյա՛լ՛ագյ պիտի կյամ, վըեր մինչև կյանքեն վէրջը մ՛ննան քցիվուչ։

Վըեր ժուղովուրթը լոխ ըսկսում ըն լա՛ց ինիլը, էտ մըեռած տղըեն Հնգըերն ասում ա.—Դե լավ, թուղեցեքյ իմ Հնգըերես վերջին պարտկըս տամ՝ ես իմ ծըեռքավըս լավ լըղըցնըեմ։ Ժուղովուրթն էլ ասում ըն.—Դե քու մոտե Հնգըերըտ ա, հունցը սըրտավըտ ա, ինդի ըրա։ Տա պիրում ա լա՛վ ճո՛ւր իփըցնըել տամ, հեռ ածում, «մըեռածս Հնգըերին թա՝ տըեղատ եր կաց, թա չէ, հեռ եկած ճո՛ւրը կըլխըետ ըմ ածում։ Հնգերը սա՛ս չի անում։ Տա ըսկըսում ա պըլթպըլթալիս ճիրավ Հնգըերին լըղըցնըելը, Հնգըերեն ջրում ա, խըավում, սա զոռավ ծ՛իրա՛ն պահում ա, սա՛ս չի անում։

Տրան տանում ըն ծ՛իրա՛ն ուտըեկլի տեռ-տեննին նհըետ թաղում։ Հնգըերը գյո՛ւղո՛ւմ ա, վըեր հեռ ածած ճո՛ւր ըծըեկյան եսո՛ն էլ չի մըեռալ, բաղարաքյան եսը մի պա՛հ ա յոր օնում, քշերը քյինամ Հնգըերեն թաղած տըեղը մին ընգյո՛ւնավ ծակում, նի մ՛ննում կոշտը։ Էտ վախտը քառասուն ղըչըղնե հինչ վըեր ժըլըըվանա վըեսկե թըլանած պիրում ըն, վըեր հենց ըտըեղ ճոթ անըեն։ Վըեսկեն ածում ըն տահանց «կյիրիզմաննենս» յիրա, քառասուն տըեղ բըրբար փայ-փայ անում։ Էտ ղըչըղնըերեն մըեծեն մին շատ սոր ու էրկան շաշկա յա ինո՛ւմ։ Տահանց ասում ա.— Էս ս՛հաթըս շաշկան կուփըլական ըմ էս թա՛զզա՛ թաղած մըռըլին փորը, տըեռնամ հի՞շտըղավ ա տա՛ս կյի՛լա՛կան։

Էտ վախտը ճոխտ Հնգըերունքն էլ տակեն ըն խոսում՝ էն մինն ասում ա.—Երեսուն կապեկըս տո։ Էտ ղըչըղնըեն ըսկանում ըն, գյո՛ւղո՛ւմ ըն թա մըռըլնըեն ծ՛իրա՛նց անա յըն վըեսկուն փայն օղում, վըեսկեն թողում ըն վըեր ածած, փախճում։

Էրկու Հնգըերը տա՛ս ըն կյամ վըեսկեղանը լոխ յոր օնում, նի միննում փոսը։ Ծակած տըեղավն էլ լուսնինգյին շոխկը ինգյա՛լ ար ըտըեղ։ Տահանք ըսկսում ըն լո՛ւսնինգյին շոխկըեն տակըեն վըեսկեն կես անըելը։ Ճոթ անողը պըրտքատար Հնգըերն ա ինում, էն կըլխան պարտկը տա՛ս ա կյամ, Հնգըերեն վըեսկեն երեսուն կըպեկավ պակաս տամ։ Հնգըերն էլ կովում ա.—Եե յը՞ս իմ վըեսկես պակաս տամ։ Էտ վախտը ղըչըղնեն Նորըմինան ըոխսկ ին ըրալ, եկալ, վըեր ծ՛իրա՛նց վըեսկեն յոր օնըեն։ Տահանց ղըլմըղալըեն սա՛ն ըսկանում ըն, ղըչըղնըերեն մըեծն ասում ա.—Պա՛հ, տըես է՞, մըռըլնըեն հիշքան շատ ըն, վըեր էնքան վըեսկին ճոթ ըն ըրալ, ամեքյա երեսուն կապեկ էլ չի ինգյո՛ւմ։